ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՀԲԸՄ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՄԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆԴԱՄՍՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյն ենք յղում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը բերում ՀԲԸ Միութեան Ընդհանուր Ժողովին՝ Միութեան Մեծարգոյ Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին, Գործադիր Վարչութեան յարգարժան անդամներին, Միութեան անդամ բարեգործ հայորդիներին, տարբեր երկրներում գործող ՀԲԸՄ-ի մասնաճիւղերին ու հաստատութիւններին:

Միաւորուած դրօշի ներքոյ Բարեգործութեան, որը առ Աստուած հաւատի ու մարդկային առաքինութեան մեծագոյն արտայայտութիւն է, դուք աշխարհի տարբեր կողմերից հաւաքուել էք Նիւ Եորքում, ՀԲԸ Միութեան տարեկան գործունէութեան արդիւնքը ի մի բերելու, գնահատելու եւ յետագայ աշխատանքները ուղղորդելու համար:

ՀԲԸ Միութեան գործունէութեամբ մեր ժողովրդի կեանքում տեսանելի է ամենուր բարեգործութեան արարող ուժը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունը քաջածանօթ է եւ Սփիւռքում, եւ Հայրենիքում: Բազմաթիւ հայորդիք մայրենի մեր լեզուին, մեսրոպատառ գրին, հնագոյն ու հերոսական մեր պատմութեանն ու հարուստ մշակոյթին հաղորդ են շնորհիւ Բարեգործականի հովանաւորութեամբ գործող հաստատութիւնների: Բազում են եկեղեցիները, ազգային դպրոցներն ու կրթօջախները, մշակութային ու մարզական կազմակերպութիւնները, խնամատար հաստատութիւնները, որոնք կառուցուած ու հիմնադրուած են Միութեան կողմից եւ այսօր ծառայում են հաւատաւոր մեր ժողովրդին՝ յանուն համազգային մեր կեանքի առաջընթացի ու աշխարհասփիւռ հայոց միասնականութեան:

Սիրելիներ, Ընդհանուր Ժողովի գումարման այս հանդիսաւոր առիթով բարձր գնահատանքով ենք նշում Միութեան հաւատարմութիւնը, սէրն ու նուիրումը համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ եւ կարեւորում այն աւանդը, որ բերում է Բարեգործականը յանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայ-

ծառութեան ու շինութեան: Աղօթական հոգով ենք յիշում ՀԲԸՄ-ի երկարամեայ Նախագահ հոգելոյս Ալէք Մանուկեանին եւ Մեր առանձնակի գնահատանքը բերում նրա արժանաւոր յետնորդ Տիկին Լուիզ Մանուկեան-Սիմոնին, որոնց ջանքերով Մայր Աթոռի հանդէպ Միութեան սէրն ու ակնածանքը արգասաւորուեց նոր նախանձախնդրութեամբ ու նոր ձեռնարկներով: Այսօր ուրախ ենք հաստատելու, որ քաջածանօթ ենք նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նոր Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանի՝ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ունեցած որդիական խանդառատ սիրոյն ու նուիրումին, եւ միանշանակ է Մեր համոզումը, որ Միութեան գործունէութիւնը նրա նախագահութեան շրջանում պիտի յատկանշուի Մայր Աթոռին զօրակցութեան ու նրա հետ համագործակցելու նոյն ոգով ու եռանդով:

Մեծապէս ուրախալի ու քաջալերող է, որ աւանդոյթներով հարուստ, հեղինակաւոր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը գործուն մասնակցութիւն է բերում եւ բազմարդիւն ներդրումներ կատարում Մայր Հայրենիքում, որը վերահաստատուած անկախ պետականութեան կայացման ճանապարհին ունի բազում խնդիրներ, որոնք կարօտ են համազգային միաբանութեան:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ հաստատուն պահի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ նոր յաջողութիւններ պարգեւի նրա ազգաշէն ու հայրենանուէր գործունէութեանը: Եւ թող այս Ընդհանուր Ժողովը նոր հանգրուան դառնայ Միութեան վսեմ առաքելութեան ճանապարհին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 11-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 295